ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի պատվիրակության Ռուսաստանի Դաշնության Իրկուտսկ քաղաք գործուղման արդյունքների մասին

2017 թվականի սեպտեմբերի 21-23-ը Ռուսաստանի Դաշնության Իրկուտսկ քաղաքում կայացել է ԱՊՀ մասնակից պետությունների գեոդեզիայի, քարտեզագրության, կադաստրի և Երկրի հեռահար զոնդավորման միջպետական խորհրդի XXXIX նստաշրջանը, որին՝ սեպտեմբերի 20-ին, նախորդել էին Միջպետական խորհրդի աշխարհագրական անվանումների գծով աշխատանքային խմբի, Միջպետական խորհրդի տարածական տվյալների ենթակառուցվածների գծով աշխատանքային խմբի և ՄԱԿ-ի Արևելյան Եվրոպայի, Հյուսիսային և Միջին Ասիայի բաժնի աշխարհագրական անվանումների գծով փորձագետների հանդիպումները: Հայաստանի Հանրապետության պատվիարկության անդամները Միջպետական խորհրդի տարածական տվյալների ենթակառուցվածների գծով աշխատանքային խմբի և ՄԱԿ-ի Արևելյան Եվրոպայի, Հյուսիսային և Միջին Ասիայի բաժնի աշխարհագրական անվանումների գծով փորձագետների հանդիպումների ժամանակ մասնակցել են ՄԱԿ-ի աշխարհագրական անվանումների գծով փորձագետների խմբի 30-րդ նստաշրջանի և աշխարհագրական անվանումների ստանադարտացմանը վերաբերող ՄԱԿ-ի 11-րդ կոնֆերանսի (կայացել են 2017 թվականի օգոստոսի 7-ից 18-ը Նյու Յորքում) զեկույցների քննարկմանը, ներկայացրել են Հայաստանի Հանրապետությունում տարածական տվյալների տեղեկատվական ենթակառուցվածքի ստեղծման համար ընդունված իրավական ակտերը, կադաստրային ծածկագրի կառուցվածքը, www.e-cadastre.am կայքում տեղադրված քարտեզը, տեղեկությունների հասանելիության մակարդակը և առաջ է քաշել տարածական տվյալների ենթակառուցվածքների գեոպորտալի միջերեսի և որոնման համակարգի աշխատանքի տրամաբանության վերաբերյալ հարցեր:

Միջպետական խորհրդի XXXIX նստաշրջանը տեղի է ունեցել Ռուսաստանի Դաշնության տնտեսական զարգացման փոխնախարար և Ռուսաստանի Դաշնության Պետական գրանցման, կադաստրի և քարտեզագրության դաշնային ծառայության (ՌՈՍՌԵԵՍՏՐ) ղեկավար Վիկտորիա Աբրամչենկոյի նախագահությամբ:

Նստաշրջանի մասնակիցներին ողջույնի խոսքով դիմեցին Իրկուտսկի նահանգապետ Սերգեյ Լևչենկոն, Ռուսաստանի Դաշնության նախագահի կողմից Սիբիրյան վարչական շրջանում լիազորված ներկայացուցչի տեղակալ Ալեքսեյ Երեմեևը, ԱՊՀ գործադիր կոմիտեի անվտանգության և նոր մարտահրավերների ու սպառնալիքների կանխարգելման բնագավառում համագործակցության դեպարտամենտի փոխտնօրեն Մուրատ Տաշիբաևը:

Նստաշրջանին մասնակցում էին Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության, Տաջիկստանի Հանրապետության և Ուզբեկստանի Հանրապետության պատվիրակությունները:

Նստաշրջանի ընթացքում քննարկվել է ԱՊՀ-ում միասնական կոորդինատային և բարձունքային համակարգի ներդրման, ստանդարտացման միջպետական տեխնիկական կոմիտեի ստեղծման, ԱՊՀ երկրներում աշխարհագրական անվանումների փոփոխության և վերջիններիս վերաբերյալ տեղեկությունների արդիականացման, ոլորտի համար մասնագետների վերապատրաստման վերաբերյալ հարցերը, տարածական տվյալների ենթակառուցվածքի իրականացման պիլոտային նախագիծը և այլն:

Հայաստանի Հանրապետության պատվիրակության ղեկավար՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի տեղակալ Նարեկ Գրիգորյանը ներկայացրեց ԱՊՀ մասնակից պետությունների գեոդեզիայի, քարտեզագրության, կադաստրի և երկրի հեռահար զոնդավորման միջպետական խորհրդի XXXVIII նստաշրջանի որոշումների կատարողականը և միջնստաշրջանային ժամանակաշրջանում ունեցած ձեռքբերումները:

Նստաշրջանի ժամանակ ներկայացվել են Ռուսաստանում գեոդեզիայի, քարտեզագրության և հեռահար զոնդավորման բնագավառում իրականացված նորարական նախագծերը:

Սեպտեմբերի 23-ին ամփոփվել է կատարված աշխատանքների արդյունքները, ինչպես նաև ԱՊՀ մասնակից պետությունների գեոդեզիայի, քարտեզագրության, կադաստրի և Երկրի հեռահար զոնդավորման միջպետական խորհրդի XXXIX նստաշրջանի մասնակից երկրների գերատեսչությունների ղեկավարների կողմից քննարկվել և ստորագրվել է նստաշրջանի ամփոփիչ փաստաթուղթը՝ արձանագրությունը:

Նստաշրջանի ավարտին քվեարկության արդյունքում գեոդեզիայի, քարտեզագրության, կադաստրի և Երկրի հեռահար զոնդավորման ԱՊՀ միջպետական խորհրդի հաջորդ՝ XL նստաշրջանի նախագահող երկիր է ընտրվել Ուզբեկստանը:

Վերը նշված արձանագրությունները կցվում են:

Առդիր՝ 10 էջ:

Կոմիտեի նախագահի տեղակալ
Նարեկ Գրիգորյան

«Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն»
ստորաբաժանման խորհրդական
Կարեն Գրիգորյան

27.09.2017թ.